ՀՀԿԳՄՄՆ<<ՄԱՐՏՈՒՆՈՒՏ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻԱՆՎԱՆԱՎԱԳԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԵՆԹԱԿԱՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՈՎ

Առարկա՝Անգլերեն

Աշխատանքիղեկավար՝ՀասմիկԲեյբության

Ուսուցիչ՝ Անահիտ Արուճյան

Մարզ՝Գեղարքունիք

ՈՒսումնական հաստատություն՝Զոլաքարի թիվ 2 միջնակարգ դպրոց

ՄԱՐՏՈՒՆԻ-2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. ԳՐԱԿԱՆԱԿՆԱՐԿ 4
1.1 Համագործակցային ուսուցումը 4
1.2 Ընտանիքի և դպրոցի համագործակցության ձևերը 5
1.3 Սովորողի աշխարհայացքի ձևավորումը 8
1.4. Հավելված 10
Հավելված 1 10
Հավելված 2 10
Հավելված 3 10
2: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ 11
2.1 Խմբի նկարագիրը (1-ին և 2-րդ հետազոտական դասերի ընթացքում) 11
2.2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1 12
“FOCUS ON CLOTHES, ACCESSORIES AND FASHION “ 12
Դասապլան 1 (Հավելված) 13
2.3 Դասապլան 1-ի վերլուծություն 14
2.4 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2 15
“MEANS OF TRAVELLING “ 15
Դասապլան 2 (Հավելված) 16
2.5 2-րդ դասապլանի վերլուծություն 17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են արյունակցական կապերով, զգացմունքներով, կենցաղի ընդհանրությամբ, բարոյական պատասխանատվությամբ և փոխօգնության պատրաստակամությամբ: Ընտանիքում երեխայի դաստիարակության հիմնախնդիրները միշտ եղել են մանկավարժական գիտության հետաքրքրությունների կենտրոնում: Այդ խնդրով զբաղվել են մի շարք մանկավարժներ Ա.Ս.Մակարենկոն իր «Դաստիարակությունն աշխատանքում» հոդվածի մեջ նշում է. «Ծնողներն առաջին հերթին պետք է հիշեն, որ իրենց երեխան աշխատանքային հասարակության անդամ է լինելու, ուստի նրա նշանակությունն այդ հասարակության մեջ կախված կլինի նրանից, թե որքանով է նա ի վիճակի մասնակցելու հասարակական աշխատանքին, որքանով է նա դրան պատրաստ: Բայց դրանից կախված է լինելու նաև նրա բարօրությունը, կյանքի նյութական մակարդակը» [2, է Ընտանիքում բնականաբար հնարավոր չէ երեխային տալ այնպիսի աշխատանքային դաստիարակություն, որը սովորաբար ենք որակավորում: Այդ պատճառով էլ շատ կարևոր է դպրով-ընտանիք կամ ուսուցիչ – ծնող համագործակցությունը: Այն նպաստում է սովորողի ուսումնական գործընթացում արդյունավետությանը: Սովորողի աշխարհայացքի ձևավորումը ոչ միայ ուսումնառության ընթացքում է կատարվում, այլև ընտանիքում, քանի որ այնտեղ է նա սովորում շատ ու շատ հասարակական դերեր:

1. ԳՐԱԿԱՆԱԿՆԱՐԿ

1.1 Համագործակցայինուսուցումը.

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է : Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցային նոր մշակույթ:Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը։
Որակապես փոխվել է սերունդը։ Այլ են նոր սերնդի մտածողության ձևերը և գիտելիքները։ Աշակերտակենտրոն ուսուցման դեպքում աշակերտը արտահայտում է իր մտածածը , սովորում է լսել ուրիշին, բանավիճել, համաձայնության գալ։
Համագործակցային, խմբային մեթոդով ՏՀ տեխնոլոգիաների ներդրումը ապահովում են ուսուցման բարձր մակարդակ։ Կարողությունների զարգացման ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար նպատակահարմար է ուսուցումը կազմակերպել խաղային, մրցակցային իրավիճակներ ստեղծելու միջոցով։ Այսպիսով՝ մեր մանկավարժական հմտության, նոր բազմաթիվ մեթոդների ստեղծագործաբար կիրառման շնորհիվ դասապրոցեսում հասնել սովորողների ակտիվության բարձրացմանը։ Դասարանում ստեղծել հոգեբանական դրական միջավայր։

1.2 Ընտանիքի և դպրոցի համագործակցության ձևերը

Ընտանիքն առաջացել է մարդկության սոցիալ-պատմական զարգացման վաղ ժամանակաշրջանում և համարվում է մարդկության մեծագույն նվաճումը՝ նպաստելով հասարակության զարգացմանը տանիքը՝ որպես ոցիալական խումբ հասարակական ինստիտուտ, բոլոր ժողովուրդ-ների կյանքում անցել է զարգացման երկարատև ճանապարհ: Ընտանիքը մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են արյունակցական կապերով, զգացմունքներով, կենցաղի ընդհանրությամբ, բարոյական պատասխանատվությամբ և փոխօգնության պատրաստակամությամբ:

Ընտանեկան դաստիարակության արդյունավետությունն ապահովում են ներընտանեկան տարբեր հարցերի քննարկումներն ու որոշումների համատեղ ընդունումը, վստահությունը, ապրումակցումը, սերը և գթասրտությունը, երեխայի վարքն ու արարքներն ըստ արժանվույն գնահատումը, վերահսկողությունը, քաջալերանքը, խրախուսումը, ընտանեկան ավանդույթների պահպանումն ու փոխանցումը, փոխըմբռնումը, փոխօգնությունը: Հոգեբանամանկավարժական գրականության մեջ առանձնացվում են ընտանեկան դաստիարակության տարբեր մոդելներ և ոճեր: Դիտարկվում են հետևյալ մոդելները.

- հեղինակություն վայելող ծնողներ, որոնք խրախուսում են երեխաների ինքնուրույնությունը, նրանց շրջապատում սիրով ու ջերմությամբ այն զուգակցելով խելամիտ պահանջկոտության հետ, հաշվի են առնում երեխաների կարծիքը, սակայն չեն կատարում նրանց քմահաճույքները հիմնավորում են իրենց մերժումը: Այսօրինակ դաստիարակություն ստացած երեխաներն ինքևուրույն են,

ունեն բարձր ինքնագնահատական, հակված են ստեղծագործական գործունեության,

- ավտորիտար ծնողներ, որոնք խիստ են, հաճախ են պատժում իրենց զավակներին, բացառում են ջերմության և փոխըմբռնման մթնոլորտը. դաստիարակությունը կառուցվում է երեխային անվերապահ ենթարկման սկզբունքի վրա այդպիսի ծնողների երեխաներն ունեն թերարժեքության զգացում, սիրո պակաս են զգում, ինքնավստահ և ինքնուրույն չեն, անընդհատ հսկողության տակ են, և նրանց ինքնուրույնությունը ճնշված է,
- լիբերալ ծնողներ, որոնք բավարարում են երեխայի ցանկացած քմահաճույքը. դաստիարակությունն ուղեկցվում է երեխայի նկատմամբ սիրով և ըմբռնմամբ, երեխայի սխալներն անտեսվում և ներվում են,
- երեխաների բարձիթողի մատնած ծնողներն անուշադիր են երեխաների նկատմամբ, պահանջկոտ չեն, չեն խրախուսում և անտեսում են նրանց, այսօրինակ դաստիարակության արդյունքում են ձևավորվում հասարակական անընդունելի վարքը, օտարումը, մեկուսացումը։

Մանկավարժության մեջ առաջարկվում են ընտանիքի և դպրոցի համագործակցության հետևյալ ձևերը՝

1 համադպրոցական դասարանական ծնողական ժողովները, այդ ժողովներում առանձին հարցերի քննարկումն ու դաստիարակչական թեմաներով դասախոսությունները,

2 ծնողների մանկավարժական լուսավորության կազմակերպումը նրանց ներգրավելով մանկավարժական ուղղվածությամբ պարապմունքներում

և ձևավորելով մանկավարժական գրագիտության ու ինքնակրթության դրդապատճառներ,

3 դպրոցի գործունեության մեջ ծնողների ակտիվ մասնակցության ապահովումը, իմացական մարզամշակութային տարբեր միջոցառումների կազմակերպումը, բարոյագիտական թեմաներով զեկուցումների անցկացումը, հանդիպումները,

4 ծնողական կոնֆերանսները և դաստիարակության արդյունավետ ձևերի փորձի փոխանակումը,

5 հատկապես դժվար դաստիարակվող երեխաների ծնողներ հետ հաճախակի անհատական զրույցները, խորհրդատվությունները, ծնողների մասնակցությունը աշակերտների ուսումնական

6 ծնողների մասնակցությունը աշակերտների ուսումնական գործունեությանը՝ խմբակների պարապմունքներին, առարկայական թեմատիկ երեկոներին, մասնակցությունը դպրոցի ուսումնական կաբինետների ձևավորմանն ու կահավորմանը, հաղորդումներ սովորողների խմբի առջև, ուսումնական ֆիլմերի համատեղ դիտումը և քննարկումը,

7 աշակերտների գործերի ցուցադրումների կազմակերպումը

8 դասղեկի կապը ծնողների աշխատավայրի հետ,

9 ակտիվ փոխգործակցությունը դասղեկի հետ, ընտանիքի դաստիարակչական հնարավորությունների հաշվառումը դասղեկի աշխատանքում:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության, երեխաների նրանց ծնողների փոխգործակցության արդյունավետությունն և ապահովվում են դպրոցի կառավարմանը ծնողների ակտիվ մասնակցությամբ, ծնողական համալսարաններում նրանց ներգրավմամբ և մանկավարժական գիտելիքների հարստացմամբ:

1.3 Սովորողի աշխարհայացքի ձևավորումը

Անձի աշխարհայացքի ձևավորումը սկսվում է նրա օնտոգենեզի բավական վաղ շրջանում, նրա կողմից գիտակցության խոսքի փորձի, գիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց և համապատասխան: Գիտական աշխարհայացքի ձևավորումը պահանջում է հատուկ մանկավարժական աշխատանք: Նրա բովանդակությունը կազմում են բնության և հասարակության զարգացման, հասարակական կյանքում մարդու տեղի և դերի, նրա կենսակերպի կյանքի իմաստի, օրինչափությունների մասին ընդհանրացված գիտելիքները: Գիտական աշխարհայացքի հիմնական բաղադրիչները ընդհանրացված գիտելիքները, համոզմունքներն ու իդեալներն են: Մարդը պետք է գիտելիքներ ունենա նաև մարդկային արժեքների մասին, որոնց տեսանկյունից նա արժևորում է այդ երևույթներն ու իրադարձությունները: Գիտելիքների ընդհանրացումը յուրաքանչյուր ուսումնական առարկայի դաստիարակչական խնդիրն է, բխում է դաստիարակող ուսուցման սկզբունքից և առաջին հերթին իրականացվում է սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորմամբ: Դրական գնահատման դեպքում գիտելիքներն ընկալվում են մարդու կողմից և դառնում նրա համոզմունքները: Համոզմունք դարձած գիտելիքներն էլ հանդես են գալիս որպես մարդու հայացքներ, իսկ ընդհանուր հայացքների ամբողջությունը՝ որպես աշխարհայացք: Այսպիսով աշխարհայացքը աշխարհի մասին մարդու ընդհանուր գիտելիքների և արժեքների միասնությունն է: Այն խորապես թափանցում է մարդու էության մեջ և դառնում նրա կյանքի առավել ընդհանուր ուղենիշը: Աշխարհայացքը կատարում է հետևյալ հասարակական գործառույթները. *լուսավորչական* , *դաստիարակող*, *զարգացնող,կազմակերպչական*, *կանխատեսման* :

Լուսավորչական գործառույթի էությունը կայանում է նրանում, որ գիտական աշխարհայացքը մարդուն հասկանալի է դարձնում բնության և

հասարակության երևույթները, ձևավորում լուսաբանող գիտակցություն, զերծ պահում սոցիալական, քաղաքական, կրոնական նախապաշարմունքներից ու մնացուկներից։

Մարդու կողմից ընդունված հայացքներն ու համոզմունքերը պահանջում են որոշակի բարոյա-կամային որակներ և գեղագիտական վերաբերմունք իրականության նկատմամբ, որի արդյունքում իրականացվում է **դաստիարակող** գործառույթը։

Զարգացնող գործառույթը պայմանավորում է մտածական գորընթացների ակտիվ խթանմամբ անձի աշխարհայացքի ձևավորում։

Կազմակերպչական գործառույթը հանդիսանում է նրանում, որ այն համարվում է անձի պրակտիկ գործունեության նախնական դիրքորոշում։

Կանխատեսման գործառույթը դրսևորվում է գիտա-տեսական իմաստավորման միտումներով։

1.4. Հավելված

Հավելված 1

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը:Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

Հավելված 2

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ) Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

Հավելված 3

Մտքերի հոսք:Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել զույգերով աշխատել:

2: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ

2.1 Խմբի նկարագիրը (1-ին և 2-րդ հետազոտական դասերի ընթացքում)

Ես իմ փորձարարական դաս 1-ինն ու 2-րդը իրականացրել եմ Զոլաքար գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ 7-րդ դասարանում: : Դասի ընթացքում խումբը բաղկացած էր 24 անդամից՝ 14 տղա և 10 աղջիկ: Դասը՝ ***"Focus on clothes, accessories and fashion"*** անցկացրելեմ յոթերորդ դասարանում; Պայմանավորված դասի թեմայով, որը կապված էր նորաձևության հետ , այն հետաքրքրություն առաջացրեց հիմնականում խմբի աղջիկ աշակերտների շրջանում: ; Դասի ընթացքում նախատեսում ենք հասկանալ համաշխարհային նորաձևության առաջ քաշած գաղափարները: Հիմնվում եմ հատկապես նորաձևության, հագուստների միջոցով աշակերտների մոտ բառապաշարի զարգացման վրա: Խմբի առաջադիմությանը լինելով ծանոթ՝ փորձում եմ հնարավորինս ներգրավվել բոլոր աշակերտներին: Եվ վերևում ինչպես նշեցի՝ դասի թեմայով ավելի շահագրգռված էին աղջիկ երեխաները, բայց դա խնդիր չհանդացավ տղա երեխաների ակտիվությանը դասի ընթացքում:

*"Means of travelling "*թեմայով երկրորդ փորձարարական դասը կրկին անցկացրել եմ նույն դասարանում՝ նպատակ ունենալով աշակերտների մոտ զարգացնել ճանապարհորդության վերաբերյալ գիտելիքներն ու դարձնել ավելի տեղեկացված: Դասի ընթացքում ակտիվ էր ամբողջ խումը, այսինքն թե տղաները և թե աղջիկները:

Խումբն ամբողջությամբ ակտիվ էր, նույնիսկ այն աշակերտները որոնք հիմնականում պասիվ մասնակցություն են ցուցաբերում դասերին:

Դասի համար ունեցած նպատակներն ու վերջում լավ արդյունք տեսնելը արդարացված էին:

2.2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ1

“FOCUS ON CLOTHES, ACCESSORIES AND FASHION “

Ուսուցչի անունը Անահիտ Արուճյան

Առարկա Անգլերեն

Դասարան 7-րդ դասարան

Դասի անցկացման ժամանակահատվածը՝ 12.10.2022թ.

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ ‘Focus on clothes, accessories and fashion “

ԴԱՍԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- *ԳՈՒՄ*
- *Պրիզմա*
- *Կշռադատում*
- *Մտագրոհ*
- *Քառաբաժանի մեթոդը*

Դասապլան 1 (Հավելված)

Ուսուցիչ՝ Անահիտ Արուճյան

Առարկա՝	**Անգլերեն**	**Ամսաթիվ**	**12.10.2022թ**	**Կիսամյակ**	**1-ին**	**Դասարան**	**7-րդ**
Խմբի բացվածք՝	Աղջիկ: 10 Տղա:14						
Թեմա՝	Focus on clothes, accessories and fashion.						
Օգտագործվող նյութեր՝	7-րդ դասարանի անգլերենի դասագիրք , տետրեր, մարկերներ, նկարներ, կպչուն թղթեր:						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտներն արդեն նախորդ դասերին ուսումնասիրել են են տարբեր ժամանակների նորաձևությունները:						
	Այս դասին սովորելու են՝ ինչ է մոդան և թե այն ինչ ազդեցություն է ունեցել տարբեր ժամանակների վրա: Դասի ընթացքում սովորելու են հագուստի տարբեր տեսակները և դրանց համարժեք անգլերեն բառերը: Այս դասին աշակերտը պետք է բացահայտի նորաձևության առանձնահատկությունները, իսկ հաջորդ դասին գիտելիքները կիրառի դասին համապատասխան առաջադրանքներ կատարելուն:						
Դասի նպատակը՝	1) Ընկալել տվյալ տեքստի բովանդակությունը 2) Սովորողներին բացատրել նորաձևության առանձնահատկությունները 3) Ձևավորել գաղափար հագուստի ընտրության մասին ըստ տարվա եղանակների 4) Զարգացնել կապակցված գրավոր խոսք կազմելու հմտություններ:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Խնդիրները՝	1)Կրթական՝ անծանոթ բառերի մեկնաբանում , 2) Զարգացնող՝ աշակերտները արտահայտիչ կկարդան դասը և վերարտադրեն 3) Դաստիարակչական՝ հագուստի ընտրության և տարիքային առանձնահատկության մասին զրույց:						
Վերջնարդյունքը	1) Կկարողանա պարզ բառապաշարով ներկայացնել տեքստի բովանդակությունը 2) Կարողանան գրել և բացատրել հագուստի տեսակները 3) Կտիրապետեն արտահայտիչ կարդալու կարողությանը 4) Կպատասխանեն տեքստին կից հարցերին 5) Կգիտակցի դասի բովանդակությունը						

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում:	Նախատեսում եմ՝ խմբային աշխատանքով բարձրանա թե յուրաքանչյուր խմբի, թե սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան:

Դասի մեթոդները	ԳՈՒՍ ՊՐԻԶՄԱ ԿԵՌԱԴԱՏՈՒՄ	
Դասի ընթացքը	Կազմակերպչական մաս՝ ներկա- բացակա	2 րոպե
	Դասի խթանում՝ ԳՈՒՍ մեթոդով բացատրել՝ ի՞նչ է ճանապարհորդությունը	5 րոպե
	Դասի իմաստի ընկալում- ուսուցիչը կարդում է տեքստը, սովորողների մոտ նոր նյութի վրա ուշադրության կենտրոնացման համար տալիս է դասի վերաբերյալ հարցեր	15 րոպե
	Բառային աշխատանք պրիզմա մեթոդով	10 րոպե
	Կշռադատում- ամփոփում	10 րոպե
	Գնահատում հանրակրթական ուսումնական հաստատությունում գործող միավորային ձևով	5 րոպե
	Տնային աշխատանքի հանձնարարում	

2.3 Դասապլան 1-ի վերլուծություն

Առաջին հետազոտական-փորձարարական դասի թեման“*Focus on clothes, accessories and fashion” է,* որը անցկացրել եմ հետևելով այս դասի համար նախատեսված իմ դասապլանին:

Այս դասով ես ցանկանում եմ լուծել ծրագրով նախատեսված հիմնական հարցերը, այն է՝ երեխաների շրջանում տարածել ու զարգացնել նորաձևության մասին գաղափարները, հետաքրքրություն առաջացնել դեպի այն, անգլերեն լեզվող սովորեցնել հագուստի տեսակների անվանումները:

Դասը սկսում ենք տարբեր ժամանակաշրջանների նորաձևությունը ուսումնասիրելով , ապա անդրադառնում ենք մոդային:Շարժվելով դասապլանում առաջ քաշած նպատակի՝ այս դասի միջոցով ցանկանում եմ աշակերտների մոտ ձևավորել գաղափար հագուստի ընտրության մասին՝ կախված տվյալ եղանակից:

Դասապլանում մանրամասնորեն անդրադարձել եմ դասի նպատակներին, խնդիրներին և վերջնարդյունքին: Այսինքն նախագծել եմ, թե ինչից պետք է սկսենք դասը և ինչ արդյունքի հասնենք:

Աղյուսակում հանգամանորեն ներկայացրել եմ նաև 45 րոպեում կատարվելիքը, որը կարևոր է համակարգված դասապրոցես ունենալու համար:

Մյուս դասին արդեն քննում ենք նորաձևության առանձնահատկությունները, իսկ վերջին դասին ամփոփում ենք երեք դասերի ընթացքում ձեռք բերած գիտելիքները և կատարում ենք առաջադրաքներ:

2.4 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

“MEANS OF TRAVELLING “

Ուսուցչի անունը Անահիտ Հարոյան

Առարկա Անգլերեն

Դասարան 7-րդ դասարան

Դասի անցկացման ժամանակահատվածը ՝14.10.2022

Դասի տևողությունը ՝ 45 րոպե

Դասի թեման ՝ “Means of travelling”

Դասի մեթոդները

- Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)
- Պրիզմա
- Կշռադատում

ԳՈՒՍ մեթոդով սովորողները հնարավորություն են ունեում նյութը ուսումնասիրել միանգամից երեք տեսանկյունից նախքան տեքստին ծանոթանալը ինչ գիտեն, ինչ սովորեցին և ինչ կուզեն ավելավնեն իրեն այդ գիտելիքներին։

Պրիզմա մեթոդը կիրառում ենք դասը սովորողների բացատրելուց հետո, ներգրավածությունը դասին տեսնելու համար։

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ

- Դասագիրք
- Տետր
- Գրիչ
- Գրատախտակ
- Կավիճ
- Համակարգիչ

Դասապլան 2 (Հավելված)

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	14.10.2022թ	Կիսամյակ	1-ին	Դասարան	7-րդ
Խմբի բացվածք՝	Աղջիկ: 10 Տղա:14						
Թեմա՝	Means of travelling						
Օգտագործվող նյութեր՝	7-րդ դասարանի անգլերենի դասագիրք , տետրեր, մարկերներ, նկարներ, կպչուն թղթեր:						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտներն արդեն ունենալով տեսական գիտելիքներ նախորդ դասից, այն է՝ պատկերացում ճանապարհորդության տեսակների , դրանց զարգացման պատմության մասին, այս դասին կուսումնասիրեն ճանապարհորդության հնարավոր վտանգներն ու կուսումնասիրեն ամենապահանջված ուղղությունները: Այս դասին աշակերտը պետք է ուսումնասիրի ճանապարհորդության առանձնահատկությունները, իսկ հաջորդ դասին կամրապնդեն ճանապարհորդությանը վերաբերող բառերի իմացությունը:						
Դասի նպատակը՝	1) Ընկալել տվյալ տեքստի բովանդակությունը 2) Սովորողներին մուտ ներմուծել ճանապարհորդության մասին գաղափարներ, 3) Ձևավորել ճանապարհորդելու տեխնիկաների մասին գիտելիքներ: 4) Զարգացնել կապակցված գրավոր խոսք կազմելու հմտություններ:						
Խնդիրները՝	1)Կրթական՝ անծանոթ բառերի մեկնաբանում , 2) Զարգացնող՝ աշակերտները արտահայտիչ կկարդան դասը և վերարտադրեն 3) Դաստիարակչական՝ կարողանալ հասկանալ և գիտակցել ճանապարհորդության վտանգները:						
Վերջնարդյունքը	1) Սովորողները արտահայտիչ կընթերցեն տեքստը և կթարգմանեն 2) Կկարողանա պարզ բառապաշարով ներկայացնել տեքստի բովանդակությունը՝ կարճատև և երկարատև ճանապ 3) Կարողանան գրել և բացատրել ճանապարհորդելու տեսակները, միջոցները)) 4) Կտիրապետեն արտահայտիչ կարդալու կարողությանը 5) Կպատասխանեն տեքստին կից հարցերին 6) Կգիտակցի դասի բովանդակությունը						

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Ամբողջ աշակերտներին ներգրավվելով դասապրոցեսում՝ դասի նյութը առավելագույնս ընկալելի դարձնել:	Աշակերտներից ուրաքանչյուրին տալ դասի վերաբերյալ ամենակարևոր եղեկություններն ու դրանց ամբողջացնել խմբակային քննարկման ժամանակ:

Դասի մեթոդները	ԳՈՒՍ ՊՐԻԶՄԱ ԿԵՌԱԴԱՏՈՒՄ	
Դասի ընթացքը	Կազմակերպչական մաս՝ ներկա- բացակա	2 րոպե
	Դասի խթանում՝ ԳՈՒՍ մեթոդով բացատրել՝ ի՞նչ է ճանապարհորդությունը	5 րոպե
	Դասի իմաստի ընկալում- ուսուցիչը կարդում է տեքստը, սովորողների մուտ նոր նյութի վրա ուշադրության կենտրոնացման համար տալիս է դասի վերաբերյալ հարցեր	15 րոպե
	Բառային աշխատանք պրիզմա մեթոդով	10 րոպե
	Կշռադատում- ամփոփում	10 րոպե
	Գնահատում հանրակրթական ուսումնական հաստատությունում գործող միավորային ձևով	5 րոպե
	Տնային աշխատանքի հանձնարարում	

2.5 Դասապլան 2-ի վերլուծություն

Երկրորդ հետազոտական-փորձարարական դասի թեման էր “Means of travelling “-ը:

Դասի ժամանակ վերլուծելով ճանապարհորդության միջոցները՝ քննարկեցինք թե ճանապարհորդելու որ միջոցներն են ավելի անվտանգ և որոնք՝ ավելի ռիսկային ու վտանգավոր:

Դասի ընթացքում գիտելիքների մեծ պաշար փոխանցվեց աշակերտներին և համոզված եմ, որ դասն ուներ ճանաչողական կողմ, որը շատ հետաքրքիր էր աշակերտներին:

Ներկայումս ապրելով այնպիսի ժամանակներում, որ տեղից տեղ տեղափոխվելու շատ միջոցներ կան՝ դասը հետաքրքիր դարձնելու համար սկսեցինք ուսումնասիրել դեռ հին ժամանակների փոխադրամիջոցները, ապա արդեն ուսումնասիրեցինք 21-րդ դարի փոխադրամիջոցները և աշակերտների հետ ինտերակտիվ դաս անցկացնելով հասկացանք՝ որոնք են ամենից պահանջվածները:

Դասի նպատակները (սովորողներին տալ ճանապարհորդության մասին գաղափար, ձևավորել ճանապարհորդելու տեխնիկայի մասին գիտելիքներ և այլն) ամբողջությամբ կատարվել են , քանի որ դասարանը նույնպես ակտիվորեն մասնակցում էր դասին:

Կարևոր է նաև դասի ընթացքում առանձնացնել խնդիրները՝ ինչի ենք ցանկանում հասնել դասի ընթացքում:

Դասապլան 2-ում մանրամասնորեն ներկայացրել եմ նաև 45 րոպեի ընթացքում դասի բաշխումը ըստ րոպեների, որը կարևոր է լավ արդյունք գրանցելու համար:

Այս դասի ընթացքում ցանկանում էի երեխաների շրջանում տարածել ճանապարհորդության միջոցների մասին գիտելիքներ, զարգացնել նրանց բառապաշարն ու անգլերենի խոսակցական մակարդակը, որը հնարավոր դարձավ հագեցած դասերի արդյունքու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքում և դպրոցում երեխայի դաստիարակության հարցում դրական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է հարգել երեխայի անձը, պաշտպանել իրավունքները, նրա կենսագործունեության համար բնականոն պայմաններ ապահովել, հաշվի առնել նախասիրությունները, հակումները, ընդունակությունները, ճիշտ դաստիարակության համար փնտրել և ընտրել ուղիներ ու միջոցներ, որը կնպաստի երեխայի աշխարհայացքի ընդլայմանը։ Աշխարհայացքը մարդուն հասկանալի է դարձնում բնության և հասարակության երևույթները, ձևավորում լուսաբանող գիտակցություն, զերծ պահում սոցիալական, քաղաքական, կրոնական նախապաշարմունքներից ու մնացուկներից։ Մարդու կողմից ընդունված հայացքներն ու համոզմունքերը պահանջում են որոշակի բարոյա-կամային որակներ և գեղագիտական վերաբերմունք իրականության նկատմամբ։

Լինելով մայրաքաղաքից շատ հեռու՝ օգտագործել ենք մի շարք հնարքները վիրտուալ ճամփորդելու և հասկանալու, թե ինչ տարբերություններ կան այդ ամենի մեջ։ Շատ կարևոր է, որ նյութը ճիշտ և մի քանի տարբեր բնագավառնելով ներկայացվի դասին,, որը կառաջացնի սովորողների մոտ կձևավորի բավականին զարգացած աշխարհայացք։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, -Եր.:Մանկավարժ, 2005, -454 էջ:
2. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով
3. Թորգոմյան Լ. Վ. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, -Եր.: Տոներ, 2005, -135 էջ:
4. Մանկավարժություն. ուսումնական ձեռնարկ մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար, Յու.Կ. Բաբանսկու խմբագրությամբ, -Եր.: <Լույս>հրատ., հ.1,1986:
5. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն, -Եր.: Զանգակ-97, 2005:
6. Б. Т. Лихачёв, Педагогика, курс лекций, Москва-2010, стр. 647.